

Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

IX ԴԱՐԻ ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆ-ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ
ԼԵՎՈՆԻ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ պատմագրության մեջ մինչև այժմ մեղ հայտնի է միայն մեկ ուստամասիրություն, որը նվիրված է IX դարի բյուզանդական ականավոր հայ գիտնական-մաթեմատիկոս Լևոնի կյանքին ու գործունեությանը: Այդ ուսումնասիրությունը պատկանում է պրոֆ. Ն. Ադոնցին և զետեղված է 1948 թ. Փարիզում տպագրված նրա «Պատմական ուսումնասիրություններ» աշխատության մեջ: Ն. Ադոնցը իր ուսումնասիրության մեջ նշում է, որ Լևոնի աշխատություններից համարյա ոչինչ չի հասել մեզ: Մեզ է հասել նրա աշակերտ Կոստանդինի գրած «Պարսավագիրը», որը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Լևոնի մասին:

Մինչև այժմ կատարված որոշ ուսումնասիրությունների մեջ շփոթել են IX դարի տարրեր ժամանակներում ապրած Լևոններին, մեկի աշխատությունը սխալմամբ վերագրել են մյուսին, երբեմն էլ երկու Լևոններին նույնացրել են մեկ անձնավորության մեջ:

Վերջին շրջանում, բացի Ն. Ադոնցի աշխատությունից, Լևոնի կյանքին ու գործունեությանը նվիրված լուրջ ուսումնասիրություններից հիշատակության արժանի է Ե. Լիպշիցի աշխատությունը, որը լույս է տեսել 1949 թ. «Византийский временник»-ում: Զնայած Ն. Ադոնցի և Ե. Լիպշիցի աշխատություններն արդյունք են բյուզանդական սկզբնադրյուրների խոր ուսումնասիրության ու քննադատական վերլուծության, ուսումնասիրություններ, որոնք մի շարք հարցեր են պարզել Լևոնի կյանքի ու գործունեության, նրա գիտական աշխատանքների ուղղության վերաբերյալ, այնուամենայնիվ մինչև այսօր էլ որոշ հարցեր վերջնականացես չեն պարզաբանված ու որոշ հար-

ցերի նկատմամբ գոյություն ունեն տարբեր տեսակետներ: Ե. Լիպշչիցի և այլ գիտնականների աշխատություններում կեռն մաթեմատիկոսին են վերագրում մի աշխատություն, որը վերաբերում է կուսանի և Արեգակի խավարումներին: Այդ հանգամանքը հետաքրքրեց մեզ և ստիպեց զրադվել կեռնի գիտական դրծունեության հարցերով, ծանոթանալ բյուզանդական որոշ սկզբնադրյուրների և նրա անձնավորությունը պարզող այլ ուսումնասիրությունների: Այս աշխատանքի նպատակն է:

1. Մինչև այժմ կատարված ուսումնասիրությունների հիման վրա համառոտակի ներկայացնել կեռնի կենսագրության որոշ հիմնական մոմենտները:

2. Քննության նյութ դարձնել կեռնին վերագրվող և նրա մասին գրված որոշ աշխատությունները:

3. Բյուզանդական պատմիչների հաղորդած տեղեկությունների հիման վրա բայց արժանվույն գնահատել կեռնի ծառայությունները ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բնագավառում:

Նախքան այս հարցերի շարադրմանն անցնելը, համառոտակի կանգ առնենք կեռնի ապրած ու նրան նախորդող ժամանակաշրջանի մի քանի բնորոշ կողմերի վրա:

IV և V դարերում գիտության մակարդակը ավելի ցածր էր քան դրան նախորդող շրջանում, այնուամենայնիվ կային մտածողներ, որոնք փորձում էին զարդացնել նախկինում ստեղծված լավագույն տրադիցիաները գիտության ու արվեստի ասպարեզներում, բացահայտել բնության զանազան երևույթները և ի հայտ բերել նոր օրինաշափություններ: Այդ գիտնականներից IV դարում հայտնի էին Թեոն Ալեքսանդրիացին, որը զբաղվում էր մաթեմատիկայով և աստղադիտությամբ, Սերեն Անտինեացին հետազոտում էր գլանի ու կոնի հատածքները, V դարում Նեոպլատոնիկ Պրոկլը, բացի փիլիսոփայությունից զբաղվում էր նաև մաթեմատիկայով. նրա գործն է պատկանում Էվլիլիդեսի երկրաշափության առաջին գորբի մասին զրված մեկնաբանությունը, որը հետաքրքրական է մաթեմատիկայի պատմության համար:

Քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո պայքար է սկսվում հեթանոսական գիտության ու նրա ներկայացուցիչների դեմ: 415 թվականին Ալեքսանդրիայում քրիստոնեական ֆանատիկները սպանում են հայտնի կին փիլիսոփա և մաթեմատիկոս Հիպատիային:

489 թվականին Զենոն կայսը փակում է Եղեսիայի համալսարանը: Հուստինիանոսի օրոք Աթենքի համալսարանի փակումը (529

թվականին) ուժեղ հարված է հասցնում գիտության զարգացմանը՝ Աթենքի համալսարանի փակումով՝ առաջին պլանի վրա է դրվում Կոստանդնուպոլսի համալսարանը, որը հիմնվել էր 425 թվականին և որի հիմնական նպատակն էր լայնորեն տարածել քրիստոնեական ուսմունքը: Կոստանդնուպոլսի համալսարանը ևս ժամանակի ընթացքում զրկվելով պետական հովանավորությունից, կորցնում է իր նշանակությունը և, հավանաբար VII դարի սկզբից, դադարում է գոյությունը ունենալուց: Այդ մասին է վկայում և այն ակնառու փաստը, որ Անանիա Շիրակացին ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Կոստանդնուպոլիս, սակայն մայրաքաղաքում գիտնական ուսուցիչների և գիտական կենտրոնների բացակայության պատճառով կես ճանապարհից մեկնում է Տրապիզոն:

VIII դարում և IX դարի առաջին կեսում Բյուզանդիայում պատկերամարտության անվան տակ սոցիալական շարժումներ են ծավալվում ժողովրդական լայն մասսաների ուժեղ շահագործման դեմ: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Բյուզանդիայում հաստատվում էին ֆեոդալական հարաբերություններ: Պատկերամարտությունը սկզբից ևեթ որոշ հարված հասցրեց պաշտոնական եկեղեցուն և նախադրյալներ ստեղծեց զբաղվելու բնական գիտություններով: Ահա այս ժամանակաշրջանումն է, որ հանդես է գալիս մեծ փիլիսոփիամթեմատիկոս Լևոնը և իր գործումներով մի նոր շրջան բացում բյուզանդական գիտության պատմության մեջ:

Մինչև այժմ կատարված հետազոտություններից հայտնի է, որ Լևոն մաթեմատիկոս ապրել ու գործել է IX դարում (ծննդյան հավանական ժամանակն է IX դարի առաջին տասնամյակը). Կրթությունը նա ստացել է Կոստանդնուպոլսում և Անդրոս կղզում, հիմնականում զբաղվել է գիտական ու մանկավարժական աշխատանքով: Մոտավորապես 840 թվականին Լևոնը նշանակվում է Սալոնիկի եպիսկոպոս: Երբ 843 թվականին Բյուզանդիայում պատկերապաշտությունը վերականգնվում է, Լևոնը և նրա հորեղբայր Հովհաննես պատրիարքը, որպես պատկերամարտոներ պաշտոնից հանվում են: Լևոնն անցնում է մանկավարժական ու գիտական աշխատանքի: Սկզբում նա աշխատում է «Թառասուն Մանկանց եկեղեցու» դպրոցում, իսկ հետագայում ստանձնում է Կոստանդնուպոլսի նորաբաց համալսարանի ռեկտորի պաշտոնը: Հավանաբար Լևոնը մահացել է 870 թվականին:

Լևոնի և նրա ղեկավարած համալսարանի գործունեության փայլուն ու բեղմնավոր տարիներն են հանդիսացել 856—866 թվական-

ները կեանն սմակցել է նշանավոր աշակերտներ, որոնցից թեոգո-
րը դասավանդել է երկրաշափություն, Թիոդեգիոսը՝ աստղագիտու-
թյուն, Կոմիտասը՝ քերականություն: Լևոնը հանդիսացել է նաև
սլավոնական դիրք ստեղծող նշանավոր Կիրիլի տառացիշը:

Հիմնական սկզբնադրյուրներից մեկը, որ զգալի տեղեկություն-
ներ է պարունակում Հայոնի գիտա-մանկավարժական, մասնավորա-
պես ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բնագավառում
կատարած աշխատանքների մասին, նրա աշակերտ Կոնստանդինի
գրած «Փարսավագիրն» է: Այդ «Փարսավագիրն» մտահիք ծանոթա-
նալու համար բերենք այն ն. Աղոնցի թարգմանությամբ.

ԼԵՎՈՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԴԵՄ ԿՈՆՍՏԱՆԴԻՆԻ ԿՈՂՄԻՑ

1

Հազար ու մի բան գիտես, որչափ նախնի մարդիկ
Ավանդել են պերճախոս ճառերում արտաքին իմաստության մասին:
Բայց հոգիդ կորավ, երբ որ խմեցիր աղի ջուրը,
Ով թշվառական, ամբարշտության ծովում լողալիս:
Դու թողիր ամենապայծառ և գերափառ հավատը
Քրիստոնեության, լուսավոր ավաղանից հետո, ով եղո՛ւկ,
Ուրանալով սարսափելի և վսեմ խորհուրդը,
Սուրբ գրքի ամենազոր հրաշագործությունը,
Գլորվեցիր հելլեն (հեթանոս) ապականության հրեշավոր վիճը,
Եվ կուր եղար հոգեկով գաղանների, ով Լևոն:
Ո՞վ շի խղճա քեզ, շի ողբա անկումդ,
Ով է, որ շի արտասվի, տեսնելով, թե ին՞չ օրի ես հասել,
Ալլես շես կարող հենել տկարացած ոտղ այն վեմին,
Աւր քայլելը հաստատուն է և անխափան:
Այժմ պաշտում ես, ո՞վ մորու, անթիվ աստվածներ,
Հրաժարվելով լուսացնցուղ երրորդությունից:

2

Լսեցե՛ք, ծնունդք մարդկան, Քրիստոսի մեծանուն ժողովուրդ,
Դուք անգետ եք այս մարդու ուրացության.
Զեսն է նրա աստվածը, որի կինն է Հերա:

Զեսը, որ անշափի սիրահար է կուսական անկողինների,
Զեսը և մի ամբողջ ոհմակ երկնալինների,
Որպես թվում է հոչակավոր Մելեսածինը (Հոմեռոսը)
Արդ եկեք, բոլոցեցանդ ազնիվ ընկերներ
Այսպես ասենք նրան միաբերան.
Կորի՛ր շարագլուխ, իշի՛ր Հաղեսի խավար տունը,
Կորի՛ր հանդերձ իմաստությամբդ, թշվառությամբդ և ամբարշտու-
թյամբդ,
Գնա շարաղետ Պիրիփիլեգեթոնի մոտ, լայնարձակ Տարտարոսը,
Ուր կարող ես տեսնել Քրիսիպպներ, Սոկրատներ,
Պրոկլներ, Պլատոններ, Արիստոտելներ, Էպիկուրներ,
Եվ քո բարեկամ՝ Եվկլիդներ և աստղաբաշխ Պտղոմեոսներ,
Այլ և իսկական իմաստության թագուհի՝
Հոմերյան մուսան, ինչպես և Հեսիոդներ և Արատներ:

3

Արժանի ես, որ հավիտենական հուրը քեզ բոլորե
Այն զարմանալի խմբի հետ,
Որոնց մարգարե ես համարում, սիրում,
Եվ համախոհ ես նրանց գաղտնի խարեռությանց:
Այս ամենը, ես Կոստանդինոս, քո կալլիոպի կաթով
Կուշտ սնված, գիտություն ամբարեցի.
Եվ սրտիդ գաղտնիքը ուսումնասիրելով
Հուսկ ուրեմն հասկացա սքողված շարիքը¹:

Այդ «Պարսավագիրը» հանդիսանում է Լևոնի գիտական-ման-
կավարժական գործունեության լավագույն գնահատականը:
Նախ և առաջ պարզ կերպով երևում է, որ շնորհիվ Լևոնի, ֆի-
զիկա-մաթեմատիկական գիտությունները Կոնստանդնուպոլսի հա-
մալսարանում, նախորդ շրջանների համեմատությամբ, բարձրացել
են մի նոր աստիճանի: Թվաբանությունը երկրաշափությունը, աստ-
ղագիտությունը և երաժշտությունը համալսարանի ուսման պլանում
ունեցել են կարևոր տեղ, Կոնստանդինի թունոտ «Պարսավագրի»
հրապարակ գալու հիմնական պատճառը պետք է համարել այն, որ
Լևոնը առաջնակարգ տեղը տվել է բնական գիտություններին, այս
հանգամանքը մտավախություն է առաջացրել քրիստոնյաների շըր-
շանում:

¹ Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 527—528:

Կոնստանդինուր նշում է, որ Լեռնը բարեկամ է Եվլիփեսին և Պտղոմեոսին Այլ փաստերի կողքին դա վկայում է, որ Լեռնը եղել է մաթեմատիկոս Արքիմեդի անունը այդ «Պարսավագրում» շի նըշվում, բայց կոնկրետ պատմական փաստերի ուսումնասիրության հիման վրա Հայրերպը 1887 թվականին հրատարակած իր աշխատավայան մեջ ցույց է տվել, որ Փարիզի և Ֆլորենցիայի ձեռագրերում պահպանվել են Արքիմեդի «Պարարոլի քառակուսում» աշխատության ձեռագրերի պատճենները, որոնցում նշում կա այն մասին, որ երկրաշափ Լեռնը երկար տարիներ իրեն նվիրել է գիտությունների ուսումնասիրության¹:

Բացի այդ «Պարսավագրից», մեղ է հասել «Լեռն փիլիսոփայի պաշտպանությունը», որի համաձայն նա պաշտում է Քրիստոսին և անիծում հելլեն կամ հեթանոս աստվածներին» վերնագրով մի ուրիշ դործ ինչպես ցույց է տվել Աղոնցը, այս վերնագրիր հիշտ չէ, որովհետեւ չի համապատասխանում այդ դրության բովանդակությունը որոշակի ցույց է տալիս, որ դրության հեղինակը դարձյալ Լեռնի նախկին աշակերտ Կոնստանդինն է, որը շարունակում է ամբաստանել իր ուսուցիչն:

Ավելի քան հիսուն տարի է, ինչ բյուզանդակիտության հարցերին նվիրված դիտական աշխատություններում շարունակվում է վիճականությունն այն ուղղությամբ, թե այդ երկու գործերի հեղինակ կոստանդինը ո՞ր Լեռնի աշակերտն է եղել. Պատմարան Բյուրին, Աղոնցից 36 տարի առաջ, այդ դործերը վերագրել է Լեռն մաթեմատիկոսի աշակերտ Կոնստանդինին:

Բյուրին, ինչպես և Աղոնցը, իր ուսումնասիրության մեջ զգալի տեղ է հատկացնում Կոնստանդինի դրած «Պարսավագրին» և մեջ է բերում նրա անգլերեն թարգմանությունը: Բյուրին դրում է. «Որոշ կղերական և վանական շրջաններում տիրող կասկածամտությունը ուժեղ կերպով դրսերվել է Լեռն փիլիսոփայի դեմ ուղղված թունոտ հարձակմամբ՝ նրա մահից հետո իր նախկին աշակերտներից մեկի կողմից, մի ոմն Կոնստանդին, որը հայտնաբերել էր հելլենական կուլտուրայի անպիտանելիությունը: Այդ հարձակումը արտահայտված է շափածոներով (էլեղիաներով) և նա խոստովանում է, որ իր այդ շափածոններ գրելու ունակությամբ պարտական է Լեռնի ուսուց-

¹ Е. Э. Липшиц, Византийский ученый Лев-математик (տե՛ս Վիզантийский временник, том II (XXVII), 1949, стр. 108).

² J. Bury, A history of the Eastern Roman Empire from the fall of Irene to the accession of Basil I, London, 1912, p. 440.

Ե. Լիպշիցը իր ծավալուն ուսումնասիրության առաջին մասը նվիրում է իրենից առաջ կատարված ուսումնասիրությունների արդյունքների համառու շարադրմանը, անելով հետևյալ եղբակացությունը.

«Եթե կարելի է լուծված համարել կառն կրտսերին կառն իմաստումի դիվանագետ կառն նիրուսֆակտի հետ նույնացնելու հարցը, ապա մինչև այժմ չպարզված են մնում պահպանված աշխատությունները այս կամ այն հեղինակին վերագրելու և կառն ավագի կենսագրական ուղենիշների ու ապրած ժամանակի հարցերը, Վիճելի է մնում այն հարցը, թե հատկապես ո՞ր կառնին պետք է վերագրել Կոնստանդինի գրած պարսավագիրը՝ կառն փիլիսոփա ավագին (Բյուրի), կառն նիրուսֆակտին (Կրոմբախեր, դե Բոոր), թե կառն 6-րդ իմաստուն կայսրին (Մին, Մատրանգա, Պոպով): Բայց առանց այս հարցերը լուծելու, հնարավոր չէ պարզել նաև կառնի գիտական ուղղությունը»¹:

Այդ հարցերի լուծման նպատակով նա իր աշխատության երկրորդ մասը ամբողջովին նվիրում է բյուզանդական սկզբնադրյաւունների բազմակողմանի ուսումնասիրությանը: Կառնի կյանքի ու գործունեության վերաբերյալ հիմնականում ճիշտ եղբակացությունների հետ մեկտեղ, Ե. Լիպշիցը իր եղբակացությունների մեջ «Պարսավագրի» մասին ոչինչ չի ասում, իսկ «Գովքի» մասին ասում է, որ այն այժմ վերջնականապես չի կարելի լուծել: Միաժամանակ այն կարծիքն է հայտնում, որ «Գովքը» վերաբերում է կառն նիրուսֆակտին: Մենք կարծում ենք, որ այդ հարցի ճիշտ պատասխանը տալիս են Բյուրին և Ադոնցը:

Կառն մաթեմատիկոսին վերագրվող աշխատություններից մեզ ավելի շատ հետաքրքրեց Արեգակի և կուանի խավարումների մասին աշխատությունը: Պրոֆ. Ն. Ադոնցն այս հարցին չի անդրադարձել: Բյուրին 1912 թվականին լույս ընծայած աշխատության մեջ այն վերագրում է կառն մաթեմատիկոսին: Ե. Լիպշիցը իր ուսումնասիրության 137-րդ էջի ծանոթագրությամբ այն կարծիքն է հայտնում, որ «Արեգակի և կուանի խավարումների մասին» մեզ հասած պատուիլու, հավանութեն պատկանում է կառն մաթեմատիկոսին: Մերձեռքի տակ է այդ պատառիկի հունական տեքստը, որ 1874 թվականին տպագրվել է Hermes ամսագրում Ֆ. Հերտլեյնի կողմից (Fragment Leons über Bedeutung von Sonnen und Mondsätzen):

¹ Е. Э. Липшиц, Византийский ученый Лев-математик (մե՛ս Византийский времениник, 1949, стр. 120.).

Այս պատառիկի բավանդակությանը ծանոթանալու համար կատարում ենք մեջբերում.

«Ἐπὶ τοῦ βασιλικοῦ τριγώνου, κρί-
ου φῆμι Λεοντὸς καὶ τοῖστον, γινο-
μένης ἡλιακῆς ἐκλείψεως ἀνάγκη τινὰ
τῶν Περὶ τὴν βασιλείαν αντή' παθεῖν
τοιοῦτον, ὅποιον συμβαίνει τῷ περὶ
τὸ τρίγωνον. εἰ δὲ περὶ τὴν ἔφαν ἥ
περι τὴν εστέραν μέλλει τοῦτο συμ-
βαίνειν, ἐξ αὐτοῦ του πασχόντος τοῦτο
φωστῆρος γενήσεται δῆλον τῷ τον
μεν ἦλιον ἐκ τῆς Ἀσιας διὰ παντος
ἀνισκειν, τὴν δὲ σελήνην ἐκ τῆς Ευ-
ρωπῆς. ἔκεινο προσεπιθεωρουμενον,
ώς, ὅταν ἐκλειψίς(ἐν) Λέοντι γένηται,
τοῖς μεν βασιλεύειν κάκωσιν μηδένει
τινά, τον δὲ Νεῖλον ἀποστρέψει ώστε
καὶ θαυμάζειν εἰκοτας την θεου προ-
νοιαν ἔστι, πάρ ολος τον τῆς εῦτυχε-
τάτης ταῦτης βασιλείας καιρον ἐκλει-
ψεως ἐπι τούτου τοῦ ζῳδίου μη γε-
νομένης. Ταῦτα περὶ ἡλιακῶν ἐκλει-
ψεων ἔιρηται ἐν τῷ πρώτῳ καὶ βασι-
λικῷ τετραγώνῳ μηδὲ ιανουαρίῳ περὶ
ἐκλειψεως ἦλιον καὶ σελήνης ἔστιν ἐν
αἰγοκερωτι ὁ ἦλιος ἐκλείπη ώρᾳ πρώ-
τη ἥ δευτέρᾳ ἥ τρίτῃ. Περσικός ἔσ-
ται πόλεμος, καὶ τοῖς οἰκουμαι προς
νοτου επελεγοντος πολλων κακων ἔσται
ώρα δε τεταρτη, πέμπτη, ἑκτη σημαί-
νει Ελυμαιδι, Περσιδι, Γερμανια,
Ινδια τῇ προς ανατολήν καὶ απηλιω-
την πτώσιν».

Թագավորական եռանկյունու,
այն է՝ Խոյի, Ապյուծի և Նետաձի-
դի վրա տեղի ունեցած՝ Արեգակի
խավարումը ցուցանիշ է, որ թա-
գավորներից որևէ մեկը պիտի
կրի այն աղեաք, որ նախատես-
ված է, եթե այդ տեղի է ունենալու
Արևելքում կամ Արևմուտքում, ա-
պա այդ հայտնի կլինի հենց նույն
ուսատուներից, որովհետեւ Արե-
գակը Ասիայից է ծագում, իսկ կու-
ինը՝ Եվրոպայից: Պետք է նկատի
նենալ, որ երբ Արեգակը խավա-
րում է Ապյուծի վրա, ապա այդ
ույց է տալիս թագավորի գժախ-
ություն և կամ նեղություն: Այն-
ուս որ պիտի գոհանալ աստծու
ախախնամության վրա, որ այս
ոչանկացույն թագավորության
նթացքում զոդիակի վրա ոչ մե-
ռավարում տեղի չունեցավ:

Այս է ասվում Արեգակի խա-
վարումների մասին առաջին և
թագավորական քառանկյունում:

Արեգակի և կուսնի հունվարյան
խավարումների մասին:

Եթե Արեգակը խավարի Այժմ զցուրի վրա ժամը մեկին, երկուսին և երեքին, պարսկական պատերազմ է լինելու, և հարավում ապրողներին մեծ ռժամանու-

թյուն է պատահելու օթե խավարի ժամը չորսին, հինգին, վեցին, այդ նշանակում է, որ ելամում, Պարսկաստանում, Գերմանիայում, Հնդկաստանում, Արևելյան Հնդկաստանում, Ապոլիտեռում զեփյուրի արագությամբ անկում է տեղի ունենալու և այն:

Այս պատառիկի բովանդակությունը իր գաղափարական և փաստական կողմերով կետն մաթեմատիկոսի ստեղծագործության հետ ոչ մի առնչություն չունի: Հայ և հունական կովտուրայի պրոգրեսիվ գծի ներկայացուցիչ կեռն մաթեմատիկոսը, որը իր աշխատանքով և գիտական գործունեությամբ հակադրվել է հասարակական կյանքի ուսակցիոն ուժերին, չէր կարող գրել այդպիսի մի գործ, որը հիմնված է ֆատալիզմի ու նախապաշարմունքների վրա: Հավանական է՝ գրչագրերի կողմից այդ պատառիկի վերնագրում կատարվել է փոփոխություն, ավելացվել է կեռնի անունը, վերջապես դա կարող է լինել մի ուրիշ կեռն:

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բնագավառում կեռնի գիտելիքների մասին որոշ պատկերացում կարելի է կազմել բյուզանդական պատմագիրների հաղորդումներից: Սիմյոն Մագնուտրոսը գրում է.

«Օ φιλόσοφος Լέան ծ Թεοσαλονίκης γενόμενος պρόεδρος տῷ βασιλεῖ Θεοφίλῳ συμβουλεύσας, ώς ὁρολόγια ἐποίησῃν δύο ἔξ ἰσου κάμνοντα καὶ τὸ μεν ἐν ἐπὶ τῷ φρουρίῳ τῷ κατὰ Κιλικίαν τῇ Ταρσῷ πλησιάζον ἀπέθετο, τὸ δὲ ἔτερον ἐν τῷ παλατίῳ ἐψυλάττετο, ἅπερ εἶχον γεγραμμένα εἰς ἑκάστην ὥραν τα ἐν Συρίᾳ γενόμαι, οἷον τὴν πρώτην ὥραν εἰς ἐκδρομῆ τῶν Σαρακηνῶν γέγονε τὴν β' εἰς πίλεμος, τὴν γ' εἰς ἐμπρησμὸς, τὴν δ' εἰς ἄλλο τι, καὶ εἰς τὰς Δοιπάτας ὅμοιώς ἐκ τῶν γεγραμμενῶν οὕν δώδεκα ὄποιθεσεων εἰς τι κάν συνέβη ἐν Συρίᾳ ἐν τῇ ὥρᾳ ἐν τῇ ḡ ἡ υπόθεσις γέγονεν, αναπτεων ἀπὸ τῶν ἐκεισε φανος, ἐπει

αկուն փիլիսոփիան, որը դարձել էր Թեսալոնիկեի մետրոպոլիտ, Թեոփիլ կայսրին խորհուրդ է տալիս, որ նա պատրաստի միատեսակ շարժվող երկու ժամացույց և դրանցից մեկը զնի Կիլիկիայում, Տարսոնի մոտ գրտընվող ամրոցում, իսկ մյուսը՝ պալատում: Այդ ժամացույցների վրա գրի էին առնված այն իրադրձությունները, որ տեղի էին ունեցել (կամ կարող էին տեղի ունենալ) Ասորիքում — առաջին ժամի տակ՝ սարակինոսների արշավանք, երկրորդի տակ՝ ճակատամարտ, երրորդի տակ՝ հրդեհ և այնուհետև, նույն ձևով, այլ իրա-

καὶ οἱ φυλλασσοντες; καὶ απεγως καὶ
ακριβως βλεποντης τὰ τετυπωμένα
ἐν αυτοῖς ἦσαν μετεδιδότο εὑθὺς
ὁ φανὸς ἀπὸ του φρουρίου του λεγο-
μενου λουλου τοῖς κατὰ τοὺς Ἀργαίαν
βουνὸν καὶ αῦθις τοῖς κατὰ τὴν Σα-
μου καὶ τοῖς κατὰ τὸν Ἀργαίαν βου-
νὸν καὶ αῦθις τοῖς κατὰ τὴν Σαμου
καὶ τοῖς κατὰ τὸ Αἴγιλον, εἶτα τοῖς
κατὰ τὸν Μάρμαντα πάλιν βουνὸν, ἀρ-
οῦ ὁ Κύριζος, εἶται ὁ Μώκιλος, ἀρ-
οῦ ὁ τοῦ ἀγίου Λύξεντιου βουνὸς τοῖς
ἐν τῷ παλατίῳ κατὰ τὸν ἥλιακὸν τοὺς
Φάρου διαιταρίοις ἀφωρισμένοις ἐν
βραχεῖ ἐποίει φανερόν.

‘Ιππευομένω σύν τῷ βασιλεῖ Μιχαήλ, ως είρηται ὁ φανός ἐσήμασεν εκδρομήν τῶν Σαρακηνῶν. αἵτος προς τὸ μὴ τους θεατὰς του ἵπποδρόμου χαλαρωτερούς τῇ αὐριον γενέσθαι προστακεν μεκέτι τοιούτους ἐνεργεῖν.»

դարձություններու Եվ եթե զրի
առնված տասներկու հնարավոր
իրադարձություններից որևէ մեկը
տեղի էր ունենում Ասորիքում, ա-
պա կրակ էր վառվում այն ժամին,
որի տակ դրված էր նրա մասին:
Եվ քանի որ պահակները աշալուրջ
հետևում էին ազդանշաններին,
ուստի այն կրակային ազդանշա-
նով լուսոն ամրոցից անմիշապես
հաղորդվում էր Արգեյան բլրի
վրա գտնվող ամրոցին: Այստեղից
ազդանշանը նորից հաղորդվում
էր Սամոսի, Էգինի և ապա Մա-
մանտի բլրի վրա գտնվող ամրոց-
ներին: Այնտեղից՝ Կիրողոս, Մո-
կիլոս, այնուհետև Ավկսենտիա
բլրից ազդանշանը արեգակնային
փարոսի միջոցով անմիշապես
հայտնի էր դառնում նաև պալա-
տին: Ինչպես ասում են, Միքայել
կայսրը դրադված էր ձիարշավնե-
րով, երբ կրակային ազդանշանով
ազդարարվեց սարակինոսների
արշավանքի մասին: Խսկ կայսրը,
երկյուղ կրելով, որ հանդիսական-
ների թիվը կարող է պակասել
վաղված ձիարշավներին, հրամա-
լեց այդ կրակե ազդանշանները
այս շվառելու:

Այս մասին գրել են նաև այլ պատմագիրներ։ Պատմագիրը գրում է. «Եվ եթե գրի առնված տասներկու հնարավոր իրադարձություններից որևէ մեկը տեղի էր ունենում Ասորիքում, ապա կրակ էր վառվում այն ժամին, որի տակ գրված էր նրա մասին»։

Քանի որ լուսական ազդանշաններով հաղորդում կարող էր տըր-վել միայն գիշերային ժամերին, ուրեմն ցերեկվա ժամը 2-ին պա-

¹ Symeonis Magistri, Bonnae, 1838, p. 681—682.

տահած դեպքի մասին հաղորդում կարող էր կատարվել գիշերվա
ժամը 2-ին: Բայց նման հաղորդումից արքայական պալատում չէին
իմանա, թե այդ դեպքը երբ է կատարվել, ցերե՞լը, թե՞ գիշերը:

Դիցուք ցերեկվա ժամը 10-ին տեղի է ունեցել արշավանք: Հստ
պատմագրի տված բացատրության, արշավանքի մասին պետք է
հաղորդվեր գիշերվա ժամը 10-ին, այսինքն 12 ժամ հետո, որը
նման դեպքերի համար բավական մեծ ուշացում է: Ինչպես երևում
է, պատմագրին լավ ծանոթ է հաղորդում կատարելու փաստը: Նա
մանրամասն նշել է նույնիսկ «Ենթակայանի» ամրոցների անոն-
ները, բայց մանրամասն չի թափանցել հաղորդումների վերաբերյալ
մշակված կանոնների մեջ:

Եթե Լևոնի ցուցումներով կարող էին պայմանավորվել, որ որո-
շակի ժամում, լուսական ազդանշանը նշանակում է որոշ իրադար-
ձություն, ապա պետք է ենթադրել, որ նրանք կարող էին նաև պայ-
մանավորվել այն մասին, որ լուսական կարճ, երկար կամ նրանցից
կազմված որոշ նշաններ համապատասխանում են այսինչ իրադար-
ձությանը: Հետևաբար կարող ենք ենթադրել, որ Լևոնը IX դարում
հիմք է դրել պայմանական նշանների միջոցով հաղորդումներ կա-
տարելու սիստեմին: Անկախ նրանից, թե լուսական ազդանշաննե-
րով հաղորդումը ինչպիսի տեխնիկա ու սիստեմ է ունեցել, պատմա-
կան փաստն այն է, որ դրա հեղինակը հանդիսանում է Լևոն մաթե-
մատիկոսը:

Այժմ անդրադառնանք մի ուրիշ պատմաբանի վկայությանը.
Միքայել Գլիկը գրում է.

«Օūտος ὁ Μιχαήλ Χρημάτων ἀπο-
ρήσας καὶ τὰς Χρυσᾶς ἐκείνας πλα-
τάνους, ὃς φιλόσοφος κατετεκέύασε
Δεων, ὡς ἄνωθεν ἔφημεν, ἐν αἷς στρου-
θοὶ καθήμενοι διὰ μηχανῆς ἐκελά-
δουν, ὡσατως δε καὶ τους λέοντας,
ἄ προς ἔκπληξιν τῶν ἐθνῶν μεμηχά-
νηται (καὶ οὕτοι γαρ ἔτειν ὅτε βρυ-
χώμενοι εθναιμάζοντο) κατακοψας ἀνά-
λοσεν.»¹

Այս մասին բացի Գլիկից, վկայում են նաև բյուզանդական այլ
պատմագրիներ:

«Այդ Միքայելը, փողի կա-
րիք ունենալով կտորների վերա-
ծեց և վաճառեց Լևոն փիլիսոփա-
յի պատրաստած այն ոսկե սոսի-
ները, որոնց վրա դրված էին մե-
խանիզմի միջոցով ձայն արձա-
կող թոշնիկներ և առյուծներ.
դրանք պատրաստված էին ժողո-
վուրդներին զարմացնելու համար
(որովհետև զարմանում էին
նրանց մռնչունով):»

¹ Michaelis Clycae, Bonae MDCCCXXXVI, p. 543.

Հետեւ դեկապարությամբ պատրաստված տեխնիկան, որ ցուցագրված է եղել Մագնավիրայի պալատում, ներկայացվել է օտարերկրյա դեսպաններին և պատվիրակներին:

Կոնստանդին Սիրանակրի խոսքերով «Երբ լոգոթեթը վերջացնում է տովորական հարցերը, առյուծներն սկսում են մոնշալ, թըռչունները (դահի և ծառի վրա) սկսում են երգել, և գահի վրա գտընվող զաղանները բարձրանում են իրենց ստների վրա... Այդ ժամանակ օտարերկրյա դեսպանները տալիս են նվերներ, որից հետո սկսում են նվագել երգեհոնները, առյուծները հանդստանում են, թոշունները զաղարում են երգել և զաղանները նստում են իրենց տեղերում»¹:

Բյուզանդական տեխնիկայի այս հրաշալիքները X դարում ցուցադրվել են նաև ոռու իշխանումի Օլգային, որի մասին հիշատակված է ոռուական տարեգործթյան մեջ.

«Царь же Михаил вся сокровища истощи съ иgreцамъ своимъ, не токмо грипосси дастъ на разореніе златыхъ, но доброкованную златую тополу, сиречь дерево, на нем же сидяху многоразличныя птицы златыя и пѣсни возглашаху, яко от жива языка, слышащимъ их удивленію творяху, чюдящимся новой хитрости оной».

Պատմագիրը վկայում է, որ սոսինների պլատանի վրա դրված էին մեխանիզմի միջոցով ձայն արձակող թոշնիկներ և առյուծներ:

Փետք է ենթադրել, որ այդ պլատանը ունեցել է բավական բարդ կառուցվածք. Հավանական է, որ տարրեր թոշունների և զաղանների համար պատրաստված է եղել առանձին սարք իր մեխանիզմով. իսկ այդ բոլորը շարժման մեջ է դրվել ավտոմատ կերպով. Միմիայն ճշգրիտ հաշվումներով կառուցված սարքերը կարող էին արձակել թոշունների բնական ձայնն ու գաղանների մոնշոցը: Դա ցուց է տալիս, որ Ալեքսանդր Մաթևոստիկական նրբին հաշվումների միջոցով լուրջ հաշողությունների է հասել մեխանիկայի և ակուստիկայի բնագավառում:

Նշված փաստերը ցուց են տալիս, որ Բյուզանդիիայում IX դարում հին հույնների թողած գիտական ժառանգությունը ուսումնասիրելու հետ միասին կատարվել են նաև ինքնուրուցին ուսումնասիրություններ՝ մաթեմատիկայի, մեխանիկայի և ակուստիկայի բնագավառներում:

¹ Е. Э. Липшиц, Византийский ученый Лев-математик (տե՛ս Վизантийский временик, 1949, стр. 148).

О ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ВЫДАЮЩЕГОСЯ УЧЕНОГО-МАТЕМАТИКА IX ВЕКА ЛЕВОНА

Резюме

В VIII и первой половине IX века в Византии развертывается социальное движение под названием иконоборчество. В этот период в Византии становится известным имя выдающегося ученого-математика Левона, который своей деятельностью и научными исследованиями открывает целую эпоху в истории византийской науки.

В статье на основе византийских источников и научных работ, посвященных Левону, по достоинству оценивается его научная деятельность в области физико-математических наук.

Основные вехи жизни и деятельности Левона в настоящее время представляются в следующем виде.

Левон родился приблизительно в первом десятилетии IX века, по национальности армянин. Образование получил в Константинополе и на острове Андрос.

В основном занимался научной и педагогической работой. В 840 году он назначается епископом в Солониках. В 843 году после восстановления иконопочитания Левон вместе со своим дядей патриархом Иоаном VII-грамматиком освобождается от своей должности как иконоборец. Вначале он работает в школе «сорока-мучеников», а впоследствии ректором новосозданного Кесарем Вардом Константинопольского университета. Левон является учителем известного Кирилла, который создал алфавит для славян. По неточным данным Левон умер в 1870 году.

Левон занимался главным образом математикой, прикладной механикой, акустикой и астрономией. Он является создателем системы световой сигнализации. Золотой платан с поющими птицами является плодом научных исследований Левона в области прикладной механики и акустики.

Написанная учеником Левона Константином «апология» касается именно Левона-математика. На это правильно ука-

зывают в своих исследованиях Н. Адонц и Дж. Бюри, между тем Е. Липшиц неверно считает, что эта «апология» посвящена другому Левону, который жил позже Левона-математика.

Фрагмент «О затмениях солнца и луны» ничего научного в себе не содержит. Здесь все основано на фатализме.

Е. Липшиц и Дж. Бюри этот фрагмент приписывают Левону-математику, что научно никак не обосновано.